ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան 25 » 01 2018թ. № 54-Ա

«ՄԱՎԱՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն № 022/Т-062 Հավատարմագրման վկայագրի Հավելված № 1-Ա-ի և Հավելված № 1-Բ-ի հավատարմագրման ոլորտներում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի և ցուցանիշների:

2. «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային նշանակել 3 տարի ժամկետով՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 8-ը, տրամադրել համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ Ն-12 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-12(Հ-12)2018:

3. «ՄԱՎԱՍ Գրուպ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

/ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2018թ.
---------- ի N ----Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

ՀՀ տեխնիկական կանոնակարգեր

1. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 679-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3917», «3924» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերման օբեկտ չհանդիսացող արտադրանք:
2. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում - միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3402» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերման օբեկտ չհանդիսացող արտադրանք:
3. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1647-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3209» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերման օբեկտ չհանդիսացող արտադրանք:
4. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ» № 1546-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի

«4818 10», «4818 20», «4818 30» «4818 40» «5601» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգեր

1. «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

2. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

3. «Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

4. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 009/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

5. «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

6. «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

7. «Մրգերից և բանջարեղեններից արտադրված հյութամթերքների տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

8. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

9. «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

10. «Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 029/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

11. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

12. «Մսի և մսամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 034/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

13. «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 040/2016) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ